ՎԴ/5093/05/20

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՈՐԾԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

07 հունիսի 2024 թվական քաղաք Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահ Հովսեփ Բեղնյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահ Գոռ Հակոբյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, նիստում ուսումնասիրելով թիվ ՎԴ/5093/05/20 գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2024 թվականի մայիսի 13-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. «ԷՆ ԷԼ ՋԻ» ՍՊ ընկերությունը 2020 թվականի օգոստոսի 12-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, ՀՀ Կառավարության և ՀՀ էկոնոմիկայի նախարարության՝ խնդրելով ոչ իրավաչափ ճանաչել պատասխանողների անգործությունը՝ հայցվորին հասցված վնասների փոխհատուցման ենթակա սուբյեկտ չդիտարկելու վերաբերյալ:

2. ՀՀ վարչական դատարանի՝ 2021 թվականի հոկտեմբերի 13-ի և 2022 թվականի հունիսի 14-ի որոշումներով, ոչ պատշաճ պատասխանողներ՝ ՀՀ

էկոնոմիկայի նախարարությունը և ՀՀ Կառավարությունը հանվել են պատասխանողների կազմից:

3. «Էն Էլ Ջի» ՍՊ ընկերությունը 2023 թվականի հուլիսի 3-ին տեղի ունեցած դատական նիստի ընթացքում հստակեցրել է հայցապահանջը՝ խնդրելով պատասխանողին պարտավորեցնել հայցվոր ընկերությանը դիտարկել (ճանաչել) որպես «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի Տրանշ-2, Տիչինա-Աշտարակ ճանապարհային հատվածի հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի» շրջանակներում իրականացվող շինարարական աշխատանքների հետևանքով ազդեցության ենթակա տնտեսվարող սուբյեկտ, ոչ իրավաչափ ճանաչել Երևանի քաղաքապետարանի անգործությունը, այն է հայցվորին հասցված վնասների փոխհատուցման ենթակա սուբյեկտ (ազդեցության ենթակա անձ) չդիտարկելու, ՀՀ Կառավարության 2016 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 1192-Ն որոշման համաձայն՝ հայցվորի դիմումների (բողոքների) պատշաճ ընթացքը չապահովելու մասով և որպես ածանցյալ պահանջ՝ տրամադրել օրենսդրությամբ և ՀՀ Կառավարության 2016 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 1192-Ն որոշման հիման վրա հաշվարկված համապատասխան փոխհատուցում:

4. ՀՀ վարչական դատարանի՝ 2024 թվականի մարտի 26-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

5. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2024 թվականի մայիսի 13-ի որոշմամբ գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարան:

6. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի մայիսի 23-ին:

<u>Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

7. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-

ին մասին, 10-րդ հոդվածի 1-ին մասին, 65-րդ հոդվածի 1-ին մասին, 81-րդ հոդվածի 1-ին մասին և ՀՀ Կառավարության 2016 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 1192-Ն որոշմամբ հաստատված «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի Տրանշ-2, Տիչինա-Աշտարակ ճանապարհահատվածի հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի» 126-րդ կետին՝ ՀՀ վարչական դատարանը 2024 թվականի մարտի 26-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) Դատարանը գտնում է, որ նշված պահանջներով հայցադիմումը ենթակա է քննության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում, քանի որ հայցվոր «Էն Էլ Ջի» ՍՊ ընկերությունն ըստ էության ցանկանում է հասնել ընկերությանը «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի Տրանշ-2, Տիչինա-Աշտարակ ճանապարհային հատվածի հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի» շրջանակներում իրականացվող շինարարական աշխատանքների հետևանքով ազդեցության ենթակա տնտեսավարող սուբյեկտ ճանաչելուն և հասցված վնասների համար փոխհատուցում ստանալուն, իսկ ՀՀ կառավարության 24.11.2016թ. թիվ 1192-Ն որոշմամբ հաստատված «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի Տրանշ-2, Տիչինա-Աշտարակ ճանապարհահատվածի հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի» 126-րդ կետի իրավակարգավորումից բխում է, որ ազդեցության ենթակա անձինք իրավունք ունեն բողոքների լուծման գործընթացի ցանկացած պահին իրենց գործերը հանձնելու ընդհանուր իրավասության դատարան, այսինքն՝ սույն գործի հարուցման համար հիմք հանդիսացած հայցադիմումով դատարանին հանձնված վեճը բխում է քաղաքացիաիրավական իրավահարաբերություններից»*[1]:

8. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասին, 11-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2024 թվականի մայիսի 13-ի որոշմամբ գտել է, որ

[1] Տե՛ս դատական գործը, 4-րդ հատոր, թերթեր 40-44:

սույն գործը ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին և այդ առնչությամբ դիմել է ՀՀ Վճռաբեկ դատարան՝ նշելով հետևյալը. *«(...) Տվյալ դեպքում հայցվոր «Էն Էլ Ջի» ՍՊ ընկերությունը «Երևանի քաղաքապետարանի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին» հայցադիմումի լրացմամբ, որպես առաջին հիմնական պահանջ նշել է՝ պատասխանողին պարտավորեցնել հայցվոր ընկերությանը դիտարկել, (ճանաչել) որպես «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի տրանշ-2, Տիչինա-Աշտարակ ճանապարհային հատվածի հողի օտարման և տարաբնակեցման ծրագր»-ի շրջանակներում իրականացվող շինարարական աշխատանքների հետևանքով ազդեցության ենթակա տնտեսավարող սուբյեկտ, իսկ երկրորդ հիմնական պահանջ ինդրել է՝ ոչ իրավաչափ ճանաչել Երևանի քաղաքապետարանի անգործությունը այն է հայցվորին՝ հասցված վնասների փոխհատուցման ենթակա սուբյեկտ (ազդեցության ենթակա անձ) չդիտարկելու և ՀՀ կառավարության 24.11.2016թ. թիվ 1192-Ն որոշման համաձայն Հայցվորի դիմումներին (Բողոքներին) պատշաճ ընթացքը չապահովելու մասով:*

Այսպես, օրենսդիրը ՀՀ վարչական դատարանի ենթակայությանն է վերապահել վարչական մարմինների անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու, ինչպես նաև անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու հետևանք հանդիսացող պահանջների քննությունը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Դատարանը գտնում է, որ թիվ ՎԴ/5093/05/20 գործն ըստ հայցի «Էն Էլ Ջի» ՍՊ ընկերության ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, երրորդ անձ՝ «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի՝ պատասխանողին հայցվոր ընկերությանը որպես «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի Տրանշ-2, Տիչինա-Աշտարակ ճանապարհային հատվածի հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի» շրջանակներում իրականացվող շինարարական աշխատանքների հետևանքով ազդեցության ենթակա տնտեսավարող սուբյեկտ դիտարկելուն (ճանաչելուն) պարտավորեցնելու, Երևանի քաղաքապետարանի անգործությունը, այն է հայցվորին հասցված վնասների փոխհատուցման ենթակա սուբյեկտ (ազդեցության ենթակա անձի չդիտարկելու, ՀՀ կառավարության 24.11.2016թ. թիվ

1192-Ն որոշման համաձայն հայցվորի դիմումների (բողոքների) պատշաճ ընթացքը չապահովելու մասով, ոչ իրավաչափ ճանաչելու և որպես ածանցյալ պահանջ՝ օրենսդրությամբ և ՀՀ կառավարության 24.11.2016թ. թիվ 1192-Ն որոշման հիման վրա հաշվարկված համապատասխան փոխհատուցում տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին, քաղաքացիական գործ չէ, և այն ենթակա չէ քննության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում»[2]:

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը</u>.

9. Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավո՞ր է արդյոք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/5093/05/20 գործն ըստ հայցի «Էն Էլ Ջի» ՍՊ ընկերության ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, երրորդ անձ՝ «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի՝ պատասխանողին հայցվոր ընկերությանը որպես «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի Տրանշ-2, Տիչինա-Աշտարակ ճանապարհային հատվածի հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի» շրջանակներում իրականացվող շինարարական աշխատանքների հետևանքով ազդեցության ենթակա տնտեսավարող սուբյեկտ դիտարկելուն (ճանաչելուն) պարտավորեցնելու, Երևանի քաղաքապետարանի անգործությունը, այն է՝ հայցվորին հասցված վնասների փոխհատուցման ենթակա սուբյեկտ (ազդեցության ենթակա անձ) չդիտարկելու, ՀՀ Կառավարության 24.11.2016թ. թիվ 1192-Ն որոշման համաձայն՝ հայցվորի դիմումների (բողոքների) պատշաճ ընթացքը չապահովելու մասով, ոչ իրավաչափ ճանաչելու և որպես ածանցյալ պահանջ՝ օրենսդրությամբ և ՀՀ Կառավարության 24.11.2016թ. թիվ 1192-Ն որոշման հիման վրա հաշվարկված համապատասխան փոխհատուցում տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին, ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:*

---

[2] Տե՛ս դատական գործը:

10. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Մասնագիտացված դատարաններն են՝*

1) վարչական դատարանը. (...)»:

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:*

Նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մասնակության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի»:*

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ *«(...) 2. Դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում վարչական դատարանից վերահասցեագրված հայցադիմումը վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը:*

(...)

6. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերում Վճռաբեկ դատարանի նախագահը և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահները գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում որոշում են գործի ենթակայությունը:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունելու համար Վճռաբեկ դատարանի նախագահը հրավիրում է նիստ՝ իր և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահների մասնակցությամբ, որն իրավազոր է, եթե դրան մասնակցում են նիստին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք:

8. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունվում է նիստին ներկա անձանց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում: Որոշմանը կողմ քվեարկած դատավորների կազմից և նրանց կողմից որոշված դատավորը կազմում է որոշման նախագիծը:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

10. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով գործի ենթակայությունը սահմանելու մասին որոշում կայացվելու դեպքում չի կարող վերաքննիչ բողոք բերվել սույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի հիմքով այն պատճառաբանությամբ, որ գործը ենթակա չի եղել քննության քաղաքացիական դատավարության կարգով»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով»:*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, (...)»:*

ՀՀ Կառավարության 2016 թվականի նոյեմբերի 24-ի N 1192-Ն որոշմամբ հաստատված հավելվածով սահմանված՝ «Երևանի արևմտյան օղակաձև ճանապարհի ճանապարհային հանգույցների շինարարություն ԲՖԳ, քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի, տրանշ 2» հողի օտարման և տարաբնակեցման Տիչինա-Աշտարակ մայրուղի ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) «Հասկացությունների սահմանումներ»-ի համաձայն՝ *«(...)* ***Ազդեցության ենթակա անձ/անձինք (ԱԵԱ)****՝ Բոլոր անձինք, ովքեր Ծրագրի իրականացման արդյունքում ազդեցության են ենթարկվում հողամասի օտարման, վերաբնակեցման կամ եկամտի կորստի հետևանքով՝ ներառյալ ցանկացած անձ, տնային տնտեսություն*

(երբեմն կոչվում են Ծրագրի ազդեցությանը ենթակա ընտանիք), ընկերություն կամ հասարակական կամ մասնավոր հաստատություն: Հետևաբար, ԱԵԱ-ների թվին են պատկանում՝ 1) մարդիկ, ովքեր ուղղակիորեն ենթակա են ճանապարհային միջանցքի, օտարման գոտիների, աշտարակի կամ սյուների հիմքերի կամ շինարարական աշխատանքների ազդեցությանը, 2) մարդիկ, որոնց գյուղատնտեսական հողը կամ այլ արտադրական սեփականությունները, ինչպես օրինակ՝ ծառերն են կամ մշակաբույսերը, ենթարկվում են շինարարական աշխատանքների ազդեցությանը, 3) մարդիկ, որոնց ձեռնարկատիրական գործունեությունն է ենթարկվում ազդեցության, և ովքեր Ծրագրի ազդեցության հետևանքով կարող են ունենալ եկամտի կորուստ, 4) մարդիկ, ովքեր աշխատանք են կորցնում Ծրագրի իրականացման հետևանքով, 5) մարդիկ, ովքեր Ծրագրի հետևանքով զրկվում են համայնքային ռեսուրսներից/գույքից: Թեև ազդեցության ենթարկված անձի մասին այս սահմանումը տարբերվում է ԱՔՀ-2009-ում տրված սահմանումից, սակայն Հայաստանի Հանրապետությունում այդպես է այն ընկալվում և պաշտոնապես օգտագործվում և չի տարբերվում ԱՔՀ-2009-ի՝ «տեղահանված անձի» սահմանումից:

(…)

Փոխհատուցում՝ *Օտարված կամ Ծրագրի ազդեցությանը ենթակա գույքերի փոխարինման արժեքի (դրամական) վճարում՝ ընթացիկ շուկայական արժեքի և Իրավունքների սխեմայի համաձայն հատկացվող նպաստների հիման վրա:*

(…)

Իրավունքներ՝ *Դրամական փոխհատուցում, եկամտի վերականգնում, վերաբնակեցման աջակցություն, եկամտի փոխարինում և վերաբնակեցում ներառող այն համաձայնեցված միջոցառումների ամբողջությունը, որոնք պետք է տրամադրվեն ազդեցության ենթարկված անձանց՝ կախված նրանց կորուստների բնույթից՝ նրանց տնտեսական և սոցիալական հիմքերը վերականգնելու համար»*:

Ծրագրի «Ամփոփ նկարագիր» վերտառությամբ գլխի 4-րդ կետի (14-րդ ենթակետ) համաձայն՝ «*Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակի (ՀՕՏՇ) համաձայն, որը հիմնված է ՀՀ օրենսդրության և ԱԶԲ ԱՔՀ (2009թ.) պահանջների վրա, փոխհատուցման և/կամ առնվազն վերականգնման իրավունք ունեցող ԱԵԱ-ներն են՝ 1) բոլոր ԱԵԱ-ները, ովքեր կորցնում են ինչպես ՀՀ օրենսդրության*

պահանջների պահպանմամբ, անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքով, այնպես էլ օրենսդրության պահանջների չպահպանմամբ, անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով տնօրինվող, տիրապետվող և օգտագործվող հողը, 2) վարձակալները, որոնք տիրապետում և օգտագործում են անշարժ գույքը՝ ինչպես ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ, անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքով, այնպես էլ օրենսդրության պահանջների չպահպանմամբ, անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով, 3) շենք/շինությունների, մշակաբույսերի, բույսերի կամ հողին ամրացված այլ օբյեկտների սեփականատերերը, 4) ձեռնարկատիրական գործունեությունը, եկամուտը և աշխատավարձը կորցնող ԱԵԱ-ները(...)»:

Նույն կետով (15-րդ ենթակետ) սահմանված՝ «Ծրագրի համար մշակված իրավունքների սխեման» վերտառությամբ Աղյուսակ Ե.2-ի 13-րդ կետի համաձայն՝ *«Ծրագրի իրականացման ընթացքում ԵՔ-ն կանդրադառնա չնախատեսված ազդեցություններին և կհոգա դրանց հետ կապված փոխհատուցումը/ վերականգնումը՝ ըստ վերոհիշյալ պայմանների»*:

Ծրագրի «Ամփոփ նկարագիր» վերտառությամբ գլխի 5-րդ կետի (16-րդ ենթակետ) համաձայն՝ *«ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը (ՏԶՆՆ) հանդիսանում է Գործադիր մարմին: Երևանի քաղաքապետարանը (ԵՔ) Իրականացնող մարմինն է և Ծրագրի իրականացման համար կրում է ընդհանուր պատասխանատվություն, ներառյալ՝ ՀՕՏԾ-ի մշակումն ու իրականացումը: ԻՄ-ն կգործի Ծրագրի իրականացման գրասենյակի (ԾԻԳ) միջոցով, որի կառուցվածքում ընդգրկված է նաև տարաբնակեցման մասնագետ»*:

Ծրագրի «Ամփոփ նկարագիր» վերտառությամբ գլխի 8-րդ կետի (25-րդ ենթակետ) համաձայն՝ *«ՀՕՏԾ-ի ամբողջական իրականացումը, ներառյալ՝ փոխհատուցումը, վերականգնման նպաստը, ինչպես նաև ՀՕՏԾ-ի իրականացման վարչական ծախսերը և չնախատեսված ծախսերը կազմում են 2,267,895,770.23 ՀՀ դրամ (...): Բյուջեի միջոցները կտրամադրվեն 3 աղբյուրներից՝ 1) Երևանում գտնվող հողերի համար փոխհատուցումը կտրվի ԵՔ-ի բյուջեից, 2) հողի օտարման այլ ծախսերը, ներառյալ՝ հարկերը, տուրքերը, վճարները կֆինանսավորվեն ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորման մասից: 3) Մնացած գույքերի դիմաց փոխհատուցումը, ներառյալ՝ նպաստները, կհատկացվեն ԱԶԲ-ի վարկից: ՀՀ*

կառավարության կողմից Հողի օգտագործման և գյուղատնտեսական նշանակության ծրագրի հաստատումից հետո Երևանի քաղաքապետարանը և ՀՀ ֆինանսների նախարարությունը համապատասխանաբար կապահովեն ՀՕՏԾ-ի բյուջեով նախատեսված ֆոնդերի ժամանակին հատկացումները»:

Ծրագրի «Ամփոփ նկարագիր» վերտառությամբ գլխի 9-րդ կետի (26-րդ ենթակետ) համաձայն՝ «*Բողոքների լուծման մեխանիզմում ներգրավված կլինեն մի քանի կողմեր՝ 1) ԾԻԳ, Բողոքների դիտարկման խումբ (ԲԴԽ) և 2) ԵՔ: Անկախ բողոքի լուծման հիմնված մեխանիզմից և ընթացակարգից՝ ԱԵԱ-ներն իրավունք ունեն իրենց հայցը ներկայացնել դատարան՝ բողոքարկման գործընթացի ցանկացած պահին*»:

Ծրագրի 2-րդ գլխի 2.7-րդ կետի (78-րդ ենթակետ) համաձայն՝ «*Ազդեցության ենթակա ձեռնարկատիրական գործունեությունների բնույթի և շրջանակի հիման վրա սույն ՀՕՏԾ-ի համար սահմանվել են ձեռնարկատիրական գործունեության միայն մշտական կորուստները (ձեռնարկատիրական գործունեությունների վրա ժամանակավոր ազդեցություն չի ակնկալվում): Դրանք ներառում են ձեռնարկատիրական գործունեության այն կորուստները, որոնք առաջացել են հիմնական շենքերը քանդելու կամ ձեռնարկատիրական գործունեության իրականացման վայրից կառույցը մշտապես տեղափոխելու հետևանքով: ԱԵԱ-ները կստանան դրամական փոխհատուցում՝ 1 տարվա զուտ եկամտի չափով*»:

Ծրագրի 5-րդ գլխի 5.2-րդ կետի (126-րդ ենթակետ) համաձայն՝ «*Բողոքների քննարկման մեխանիզմից և ընթացակարգերից անկախ՝ ազդեցության ենթակա անձինք իրավունք ունեն բողոքների լուծման գործընթացի ցանկացած պահին իրենց գործերը հանձնելու ընդհանուր իրավասության դատարան*»:

Ծրագրի 6-րդ գլխի 6.3-րդ կետի (148-րդ ենթակետ) համաձայն՝ «*Ծրագրի ներքո ՀՕՏ առաջադրանքները կիրականացվեն՝ ըստ փոխհատուցման իրավունքների և իրավասությունների շրջանակի՝ ՀՀ օրենսդրությանն ու կանոնակարգերին և ԱՋԲ քաղաքականությանը համապատասխան: Փոխհատուցման գումարը սահմանելու համար հիմք է հանդիսանում գույքի շուկայական արժեքը, իսկ այն դեպքերում, երբ գույքի կադաստրային արժեքը գերազանցում է շուկայական արժեքին, ապա որպես հիմք ծառայում է կադաստրային արժեքը: Մանրամասների համար տե՛ս ստորև բերված Իրավունքների սխեման*»:

Նույն կետով սահմանված՝ «Ծրագրի համար մշակված իրավունքների սխեման» վերտառությամբ 6-2 աղյուսակի 13-րդ կետի համաձայն՝ «*Ծրագրի իրականացման ընթացքում ԵՔ-ն կանդրադառնա չնախատեսված ազդեցություններին և կհոգա դրանց հետ կապված փոխհատուցումը/վերականգնումը՝ ըստ վերոհիշյալ պայմանների*»:

Ծրագրի 7-րդ գլխի 7.3-կետի (159-րդ կետ) համաձայն՝ «*Ծրագրի արդյունքում մշտական ազդեցության կենթարկվի ընդամենը թվով հինգ ձեռնարկատիրական գործունեություն: Ստորև բերված աղյուսակն (Աղյուսակ 7-2) ամփոփում է ազդեցության մանրամասները իրացման գոտում իրականացվող ձեռնարկատիրական գործունեության վրա, որոնք պետք է մշտապես տեղափոխվեն*»:

Ծրագրի 8-րդ գլխի 8.6-րդ կետի (181-րդ ենթակետ) համաձայն՝ «*Բոլոր 5 ձեռնարկատիրական գործունեությունները կկրեն մշտական ազդեցություն: Դրանցից չորսն ունեն հարկային հայտարարագրեր, իսկ մեկը՝ չունի: Ազդեցության ենթակա բոլոր ձեռնարկատիրական գործունեություններն առևտրային բնույթի են*»:

Ծրագրի 9-րդ գլխի 9.2-րդ կետի (203-րդ ենթակետ) համաձայն՝ «*Երևանի քաղաքապետարանը (ԵՔ) ընդհանուր պատասխանատվություն է կրում ծրագրի համար: Դա ներառում է նախապատրաստումը, բոլոր ՀՕՏ առաջադրանքների իրականացումն ու ֆինանսավորումը, ինչպես նաև գործակալությունների միջև համակարգումը: ԵՔ-ն Ծրագրին առնչվող իր գործառույթներն իրականացնում է Ծրագրի իրականացման գրասենյակի միջոցով (ԾԻԳ): ԾԻԳ-ի տարաբնակեցման մասնագետն (ՏՄ) անմիջականորեն հաշվետու է ԾԻԳ-ի տնօրենին՝ բոլոր ՀՕՏ առաջադրանքների պլանավորման և իրականացման ընդհանուր կառավարման առումով*»:

Ծրագրի 10-րդ գլխի 10.4-րդ կետի (226-րդ ենթակետ) համաձայն՝ «*Եթե շինարարության փուլում որևէ ազդեցություն ի հայտ գա Կապալառուի գործողությունների հետևանքով, մասնավորապես՝ եթե ձեռնարկատիրական գործունեությունն ազդեցության է ենթարկվում ժամանակավորապես փակված մուտքի կամ ցանկացած այլ եկամուտ առաջացնող աղբյուրի փակված մուտքերի պատճառով, կամ վնասվում են ԱԵԱ-ների բարելավումները, գույքերը (մշակաբույս,*

ծառ և այլն), ԱԵԱ-ների փոխհատուցումը կատարվում է Կապալառուի հաշվին հետևյալ ընթացակարգով՝ 1) ազդեցությունը կգնահատվի և կարձանագրվի Կապալառուի կողմից և կստորագրվի ԱԵԱ-ների կողմից, 2) ԱԵԱ-ների փոխհատուցումը կգնահատվի ՀՕՏՇ-ում սահմանված իրավունքների և սույն ՀՕՏԾ-ում սահմանված գնահատման մեթոդաբանության համաձայն, 3) ԱԵԱ-ներին պատշաճորեն կտեղեկացնեն դրա մասին, 4) փոխհատուցման համաձայնագիր կկնքվի ԱԵԱ-ների հետ: Իրականացված բոլոր գործողությունների մասին կիրազեկվեն Պատվիրատուն և ՄՆՇՎԽ-ն՝ ստանալով ստորագրված արձանագրության և համաձայնագրի օրինակները»:

11. Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման հարցին ՀՀ Վճռաբեկ դատարանը մանրամասն անդրադարձ է կատարել *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության, երրորդ անձ «ՄաքԴոնալդս Քորփորեյշն» ընկերություն* վարչական գործով կայացված որոշման շրջանակներում՝ արձանագրելով հետևյալը. *«(…) Հանրային իրավահարաբերությունը մասնավոր հարաբերությունից տարանջատվում է թե՛ սուբյեկտային կազմով, թե՛ բովանդակությամբ և թե՛ օբյեկտով: Այդ տարրերն առանձին-առանձին անհրաժեշտ են, իսկ իրենց համակցության մեջ բավարար են, որպեսզի փաստվի իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը: Իրավահարաբերությունը հանրային հատկանիշով բնութագրելու համար նախևառաջ անհրաժեշտ է, որ հարաբերության կողմ հանդես գա հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը (վարչական մարմիններ, դրանց պաշտոնատար անձիք, այդ թվում պետական և համայնքային ծառայողներ): Մինչդեռ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ իրավահարաբերության կողմ լինելը դեռևս չի նշանակում, որ իրավահարաբերությունը հանրային բնույթի է, քանի որ հանրային բնույթը՝ որպես իրավահարաբերության բնութագրիչ, ծավալային առումով ներառում է իրավահարաբերության թե՛ սուբյեկտային կազմը, թե՛ օբյեկտը, թե՛ բովանդակությունը և ի հայտ է գալիս միայն վերոնշյալ երեք տարրերի համակցությամբ: (…) Հանրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում*

հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները (…)»[3]:

11.1. ՀՀ Վճռաբեկ դատարանը մեկ այլ՝ *Գոռիշխան Իշիկյանն ընդդեմ ««ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ-ի և ՀՀ Կառավարության առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության, երրորդ անձ Հռիփսիմե Իշիկյանի* քաղաքացիական գործով կայացված թիվ ԵՄԴ/1029/02/14 որոշմամբ արձանագրել է. *«Հանրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները: Իրավահարաբերության հանրային լինելու և դրանից բխող վեճը վարչական դատարանին ընդդատյա լինելու հանգամանքը պարզելու նպատակով պետք է գնահատման առարկա դարձվեն հետևյալ հանգամանքները.*

1. արդյո՞ք իրավահարաբերության կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է, թե՝ ոչ,

2. արդյո՞ք այդ իրավահարաբերության բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, թե՝ ոչ,

3. արդյո՞ք այդ իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ (իրավահարաբերությունն ուղղված է եղել հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը), թե՝ ոչ:

Միայն վերոգրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում է հնարավոր փաստել իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը, ինչպես նաև այդ հարաբերությունից բխող վեճերի ընդդատության հարցը՝ հաշվի առնելով նաև այն կարևոր հանգամանքը, որ հանրային հարաբերություններից

---

[3] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրցավոր սեփականության գործակալության, երրորդ անձ «ՄաքԴոնալդս Քորփորեյշն» ընկերություն*՝ վարչական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0830/05/14 որոշումը:

բխող բոլոր վեճերը չեն, որ վերապահված են վարչական դատարանի քննությանը, (…)»[4]:

12. Սույն որոշման 10-11.1-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից և մեջբերված իրավական դիրքորոշումներից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին է վերապահել այն բոլոր գործերը, որոնց քննությունը վերապահված չէ մասնագիտացված դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Միևնույն ժամանակ, օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի վերաբերյալ գործերը: Փաստորեն, որևէ դատական գործի՝ վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

Անդրադառնալով «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի Տրանշ-2, Տիչինա-Աշտարակ ճանապարհային հատվածի հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի» շրջանակներում իրականացվող շինարարական աշխատանքների հետևանքով ազդեցության ենթակա տնտեսվարող սուբյեկտ դիտարկելու, ինչպես նաև այդ շրջանակներում փոխհատուցման տրամադրման իրավահարաբերությունների բնույթին՝ անհրաժեշտ է նշել հետևյալը.

Ծրագիրը, վնասների և ազդեցությունների գնահատման և հատուցումների մասով, բաղկացած է իրականացման ենթակա մի քանի փուլային ընթացակարգերից, որոնցից յուրաքանչյուրն ունի առանձին սուբյեկտային կազմ: Մասնավորապես, Ծրագրի նախնական (ազդեցությունների ենթակա անձանց որոշման) փուլում ծագած իրավահարաբերությունների մասնակից են Երևանի քաղաքապետարանը, ի թիվս այլ կազմակերպիչ մարմինների, և ազդեցության ենթակա անձիք: Ընդ որում, ազդեցության ենթակա անձիք այն բոլոր սուբյեկտներն

---

[4] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գոռիշիան Իշիկյանն ընդդեմ ««ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՔԱՋԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ-ի և ՀՀ Կառավարության առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության, երրորդ անձ Հռիփսիմե Իշիկյանի* քաղաքացիական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ԵՄԴ/1029/02/14 որոշումը:

են, ովքեր Ծրագրի իրականացման արդյունքում ազդեցության են ենթարկվում հողամասի օտարման, վերաբնակեցման կամ եկամտի կորստի հետևանքով՝ ներառյալ ցանկացած անձ, տնային տնտեսություն, ընկերություն կամ հասարակական կամ մասնավոր հաստատություն, մասնավորապես՝ այն անձիք

1) ովքեր ուղղակիորեն ենթակա են ճանապարհային միջանցքի, օտարման գոտիների, աշտարակի կամ սյուների հիմքերի կամ շինարարական աշխատանքների ազդեցությանը,

2) որոնց գյուղատնտեսական հողը կամ այլ արտադրական սեփականությունները, ինչպես օրինակ՝ ծառերն են կամ մշակաբույսերը, ենթարկվում են շինարարական աշխատանքների ազդեցությանը,

3) որոնց ձեռնարկատիրական գործունեությունն է ենթարկվում ազդեցության, և ովքեր Ծրագրի ազդեցության հետևանքով կարող են ունենալ եկամտի կորուստ,

4) ովքեր աշխատանք են կորցնում Ծրագրի իրականացման հետևանքով,

5) ովքեր Ծրագրի հետևանքով զրկվում են համայնքային ռեսուրսներից/գույքից:

Եթե անձը համապատասխանում է «Ազդեցության ենթակա անձ» սուբյեկտի համար մատնանշված չափանիշներին, ապա վերջինս պետք է ծրագրի համար ընդհանուր պատասխանատվություն կրող և այն իրականացնող մարմնի՝ Երևանի քաղաքապետարանի կողմից ներառվեր փոխհատուցման իրավունք ունեցող անձանց շարքում՝ համապատասխան փոխհատուցում ստանալու իրավունքն ապահովելու նպատակով: Հետևաբար Ծրագրի նախնական՝ ազդեցությունների ենթակա անձանց որոշման փուլում Երևանի քաղաքապետարանի կողմից, որպես հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտ, իրականացվում է հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, որի իրականացման համար վերջինս լիազորվել է ՀՀ Կառավարության կողմից: Միաժամանակ, նշված լիազորությունն ուղղված է հանրային շահի՝ «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի Տրանշ-2, Տիչինա-Աշտարակ ճանապարհային հատվածի հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի» շրջանակներում իրականացվող շինարարական աշխատանքների սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը:

Հետևաբար «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի Տրանշ-2, Տիչինա-Աշտարակ ճանապարհային հատվածի հողի օտարման և տարաբնակեցման

ծրագրի» շրջանակներում իրականացվող շինարարական աշխատանքների հետևանքով ազդեցության ենթակա տնտեսվարող սուբյեկտ դիտարկելու և այդ շրջանակներում փոխհատուցման տրամադրման իրավահարաբերություններից ծագող վեճը, վնասների և ազդեցությունների գնահատման և հատուցումների մասով, Ծրագրի 1-ին փուլում բխում է այնպիսի իրավահարաբերությունից, որի բովանդակությունը հանգում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի՝ Երևանի քաղաքապետարանի հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությանը, իսկ քննության ենթակա պահանջի հիմքում ընկած վիճելի իրավահարաբերությունն ուղղված է հանրային շահի ապահովմանը:

13.Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

-«ԷՆ ԷԼ ՋԻ» ՍՊ ընկերությունը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ թիվ ՎԴ/5093/05/20 գործն ըստ հայցի «Էն Էլ Ջի» ՍՊ ընկերության ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, երրորդ անձ՝ «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի՝ պատասխանողին հայցվոր ընկերությանը որպես «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի Տրանշ-2, Տիչինա-Աշտարակ ճանապարհային հատվածի հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի» շրջանակներում իրականացվող շինարարական աշխատանքների հետևանքով ազդեցության ենթակա տնտեսվարող սուբյեկտ դիտարկելուն (ճանաչելուն) պարտավորեցնելու, Երևանի քաղաքապետարանի անգործությունը, այն է՝ հայցվորին հասցված վնասների փոխհատուցման ենթակա սուբյեկտ (ազդեցության ենթակա անձ) չդիտարկելու, ՀՀ Կառավարության 2016 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 1192-Ն որոշման համաձայն՝ հայցվորի դիմումների (բողոքների) պատշաճ ընթացքը չապահովելու մասով ոչ իրավաչափ ճանաչելու և որպես ածանցյալ պահանջ՝ օրենսդրությամբ և ՀՀ Կառավարության 2016 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 1192-Ն որոշման հիման վրա հաշվարկված համապատասխան փոխհատուցում տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին[5]:

- ՀՀ վարչական դատարանը 2024 թվականի մարտի 26-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր

[5] Տե՛ս սույն որոշման 1-ին և 3-րդ կետերը:

իրավասության քաղաքացիական դատարանին՝ այն պատճառաբանությամբ, որ հայցվոր «Էն Էլ Ջի» ՍՊ ընկերությունն ըստ էության ցանկանում է հասնել ընկերությանը «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի Տրանշ-2, Տիչինա-Աշտարակ ճանապարհային հատվածի հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի» շրջանակներում իրականացվող շինարարական աշխատանքների հետևանքով ազդեցության ենթակա տնտեսվարող սուբյեկտ ճանաչելուն և հասցված վնասների համար փոխհատուցում ստանալուն, այսինքն՝ սույն գործի հարուցման համար հիմք հանդիսացած հայցադիմումով դատարանին հանձնված վեճը բխում է քաղաքացիաիրավական իրավահարաբերություններից[6]:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2024 թվականի մայիսի 13-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին և այդ առնչությամբ դիմել է ՀՀ Վճռաբեկ դատարան՝ նշելով, որ հայցվոր «Էն Էլ Ջի» ՍՊ ընկերությունը «Երևանի քաղաքապետարանի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին» հայցադիմումի լրացմամբ, որպես առաջին հիմնական պահանջ նշել է՝ պատասխանողին պարտավորեցնել հայցվոր ընկերությանը դիտարկել, (ճանաչել) որպես «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի տրանշ-2, Տիչինա-Աշտարակ ճանապարհային հատվածի հողի օտարման և տարաբնակեցման ծրագր»-ի շրջանակներում իրականացվող շինարարական աշխատանքների հետևանքով ազդեցության ենթակա տնտեսվարող սուբյեկտ, իսկ որպես երկրորդ հիմնական պահանջ խնդրել է՝ ոչ իրավաչափ ճանաչել Երևանի քաղաքապետարանի անգործությունը, այն է՝ հայցվորին հասցված վնասների փոխհատուցման ենթակա սուբյեկտ (ազդեցության ենթակա անձ) չդիտարկելու և ՀՀ Կառավարության 2016 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 1192-Ն որոշման համաձայն Հայցվորի դիմումների (բողոքների) պատշաճ ընթացքը չապահովելը: Ուստի այդպիսի պահանջներով վեճը բխում է հանրային իրավահարաբերություններից, քաղաքացիական չէ և ենթակա չէ քննության Երևան

[6] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում[7]:

12. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 10-12-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է նկատել, որ «Էն Էլ Ձի» ՍՊ ընկերությունը որպես առաջին հիմնական պահանջ խնդրել է «*պատասխանողին պարտավորեցնել հայցվոր ընկերությանը դիտարկել, (ճանաչել) որպես «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի տրանշ-2, Տիչինա-Աշտարակ ճանապարհային հատվածի հողի օտարման և տարաբնակեցման ծրագր»-ի շրջանակներում իրականացվող շինարարական աշխատանքների հետևանքով ազդեցության ենթակա տնտեսավարող սուբյեկտ*»: Միաժամանակ, երկրորդ հիմնական պահանջով հայցվոր ընկերությունը խնդրել է «*ոչ իրավաչափ ճանաչել Երևանի քաղաքապետարանի անգործությունը այն է հայցվորին՝ հասցված վնասների փոխհատուցման ենթակա սուբյեկտ (ազդեցության ենթակա անձ) չդիտարկելու և ՀՀ կառավարության 24.11.2016թ. թիվ 1192-Ն որոշման համաձայն Հայցվորի դիմումներին (Բողոքներին) պատշաճ ընթացքը չապահովելու մասով*»: Այսինքն՝ հայցվոր ընկերության հիմնական պահանջները վերաբերում են ազդեցության ենթակա անձի կարգավիճակի ձեռքբերմանը և այդպիսի կարգավիճակի չտրամադրման՝ Երևանի քաղաքապետարանի անգործության իրավաչափության վիճարկմանը, որը Երևանի քաղաքապետարանի կողմից Ծրագրի 1-ին փուլում իրականացման ենթակա գործառույթ է:

Նշված իրավահարաբերությունում՝

- կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է՝ Երևանի քաղաքապետարանը, որը տվյալ իրավահարաբերությունում իրացնում է Կառավարության որոշմամբ իրեն վերապահված լիազորությունները,

- իրավահարաբերության բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի՝ Երևանի քաղաքապետարանի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացումը, այն է՝ «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի Տրանշ-2, Տիչինա-

[7] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

Աշտարակ ճանապարհային հատվածի հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի» շրջանակներում ազդեցության ենթարկվող անձանց որոշելը,

- իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ, այսինքն՝ ուղղված է եղել հանրային շահի իրացմանը՝ «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի Տրանշ-2, Տիչինա-Աշտարակ ճանապարհային հատվածի հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի» շրջանակներում իրականացվող շինարարական աշխատանքների սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը:

Վերոգրյալը հիմք է տալիս փաստելու, որ սույն գործով իրավական վեճը բխում է ոչ թե մասնավոր, այլ հանրային իրավահարաբերություններից:

13. Վերը նշվածից հետևում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/5093/05/20 գործն ըստ հայցի «Էն Էլ Ջի» ՍՊ ընկերության ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, երրորդ անձ՝ «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի՝ պատասխանողին հայցվոր ընկերությանը որպես «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի Տրանշ-2, Տիչինա-Աշտարակ ճանապարհային հատվածի հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի» շրջանակներում իրականացվող շինարարական աշխատանքների հետևանքով ազդեցության ենթակա տնտեսվարող սուբյեկտ դիտարկելուն (ճանաչելուն) պարտավորեցնելու, Երևանի քաղաքապետարանի անգործությունը, այն է՝ հայցվորին հասցված վնասների փոխհատուցման ենթակա սուբյեկտ (ազդեցության ենթակա անձ) չդիտարկելու, ՀՀ Կառավարության 2016 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 1192-Ն որոշման համաձայն՝ հայցվորի դիմումների (բողոքների) պատշաճ ընթացքը չապահովելու մասով, ոչ իրավաչափ ճանաչելու և որպես ածանցյալ պահանջ՝ օրենսդրությամբ և ՀՀ Կառավարության 2016 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 1192-Ն որոշման հիման վրա հաշվարկված համապատասխան փոխհատուցում տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին, ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին, հիմնավոր է:

Ուստի, «Էն Էլ Ջի» ՍՊ ընկերության հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ՎԴ/5093/05/20 գործը ենթակա է ՀՀ վարչական դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

թիվ ՎԴ/5093/05/20 գործն ըստ հայցի «Էն Էլ Ջի» ՍՊ ընկերության ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, երրորդ անձ՝ «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի՝ պատասխանողին հայցվոր ընկերությանը որպես «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի Տրանշ-2, Տիչինա-Աշտարակ ճանապարհային հատվածի հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի» շրջանակներում իրականացվող շինարարական աշխատանքների հետևանքով ազդեցության ենթակա տնտեսվարող սուբյեկտ դիտարկելուն (ճանաչելուն) պարտավորեցնելու, Երևանի քաղաքապետարանի անգործությունը, այն է՝ հայցվորին հասցված վնասների փոխհատուցման ենթակա սուբյեկտ (ազդեցության ենթակա անձ) չդիտարկելու, ՀՀ Կառավարության 2016 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 1192-Ն որոշման համաձայն՝ հայցվորի դիմումների (բողոքների) պատշաճ ընթացքը չապահովելու մասով, ոչ իրավաչափ ճանաչելու և որպես ածանցյալ պահանջ՝ օրենսդրությամբ և ՀՀ Կառավարության 2016 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 1192-Ն որոշման հիման վրա հաշվարկված համապատասխան փոխհատուցում տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին, ենթակա է ՀՀ վարչական դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀՈՎՍԵՓ ԲԵԴԵՎՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ